# Ակադեմիան ամփոփեց 2011-ի գիտական գործունեությունը

Գիտությունների ազգային ակադեմիայում (ԳԱԱ) երեկ տեղի ունեցավ ԳԱԱ տարեկան ընդհանուր հաշվետու ժողովը, որին ներկա էին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, կրթության ու գիտության նախարար Արմեն Աշոտյանը եւ այլ պաշտոնական անձինք:

Սկզբում **Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը** փոխանցեց Վեհափառ հայրապետի օրհնության խոսքը: Ապա ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանն** ամփոփեց ակադեմիայի 2011 թվականի գիտական գործունեության ձեռքբերումներն ու խնդիրները: Նրա տվյալներով` ակադեմիայի կազմում ընդգրկված են 28 ինստիտուտ եւ 3 գիտական կենտրոն: Նախորդ տարի կարեւոր քայլ էր, որ Ազգային ժողովն ընդունեց «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքը, որով հստակեցվեց ԳԱԱ կարգավիճակը` որպես պետական լիազորված մարմնի:

Ակադեմիայի համակարգի աշխատողների ընդհանուր թիվը ներկայումս կազմում է 3974, որոնցից 2409 գիտական աշխատողներ են, 332-ը` գիտության դոկտոր, 1130-ը` գիտության թեկնածու: Իսկ ակադեմիայի ամբողջ համակարգի համար պետական ֆինանսավորումը 2011 թվին կազմել է 4 միլիարդ 595 միլիոն 426.7 հազար դրամ:




Երբ Ռադիկ Մարտիրոսյանը նշեց` իրենց համակարգի աշխատողների միջին աշխատավարձը 72 հազար դրամ է, դահլիճում սկսվեցին խոսակցություններ, քանի որ ներկաները թերահավատորեն ընդունեցին միջին աշխատավարձի թիվը` կարծելով, որ ավելի ցածր է:

Ցածր աշխատավարձերը, սերնդափոխության եւ հատկապես միջին սերնդի կադրերի սակավությունը, ինչպես նախորդող մյուս տարիներին, 2011-ին նույնպես եղել են ակադեմիայի կարեւոր խնդիրները: Այնուամենայնիվ, սոցիալական խնդիրների առումով ձեռքբերում կա. Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ հանրապետության նախագահի աջակցությամբ երիտասարդ գիտաշխատողների համար կառուցվում է 200 բնակարան ունեցող բնակելի շենք:

Ելույթ ունեցան նաեւ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Հրանտ Մաթեւոսյանը եւ ուրիշներ: Դահլիճից էլ հարցեր հնչեցին, դրանցից մի քանիսի առնչությամբ նախագահ **Սերժ Սարգսյանը** նշեց. «Այդ հարցերի պատասխանը ոչ թե պետք է տա Ռադիկ Մարտիրոսյանը, այլ ես: Իսկ իմ պատասխանը կարող է ընկալվել որպես նախընտրական քարոզչություն: Հետեւաբար ձեր հարցերին մենք հետո կպատասխանենք»:

Ի. Պ.